

ԱՇԽԱՄՀԱԿԱՐԳԻ ՔԻՄԻՉԵՐՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Լևոն Շիրինյան

**Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող**

«Միջազգային հակամարտությունները ծագում են այն ժամանակ, երբ առկա է շահերի մրցակցություն համաշխարհային մասշտաբով: ԶԼՄ-ների մեկնարանությունները մեզ ներշնչում են իրքն թե տարածաշրջանային հակա-մարտությունները մասնակի անոնմալիաներ են, որոնք կախված չեն զլորապ համատերստից և բխում են տեղական ժողովուրդների տգիտությունից: Իրականում երկրաբաղաքականությունը (գեոպոլիտիկան) պետք է նմանեցնել տեկստոնական պլատֆորմների շարժման հետ: Ահոելի պլատֆորմները սահում են և բախվում միմյանց: Մի քանի կետերում հարվածներն այնքան ուժեղ են, որ նրանք ծնում են երկրաշարժեր: Սակայն, ինքը երկրաշարժի փաստը ինքնուրույն չէ, նրանում իրենց արտահայտությունն են գտնում անկախ ստորերկրյա գործընթացները»¹:

Էմերիկե Շոպրադ

ԽՍՀՄ լուծարումից հետո, երբ անեացակ երկրներ աշխարհը, աշխարհակարգի հիմնախնդիրը զարգացման իր ուրույն օրինաշափություններով, գործառույթի մեխանիզմներով և, զիսավորը, էվոլյուցիայի միտումներով դարձավ XXI դարի առաջին տասնամյակների քաղաքագիտական խոսույթի (դիսկուրս) հրատապ ուղղություններից մեկը:

¹ St' u,Elements, 1998, Paris,N 3, 87 p.

Տարբեր հեղինակների կողմից փորձ արվեց առաջին հերթին հասկանալ նրա բովանդակությունը, տալ համապատասխան գնահատական: Այդ ուղղությամբ աշքի ընկան հետխորհրդային գիտաքաղաքական տարածքում է. Յու. Բատալյով², Ա.Ի. Ուտկինը³, Ա.Ա. Կապտոն և Ե.Ա. Ռոգաչյան⁴, վերջին շրջանում՝ Ն.Մ. Սիրոտան⁵:

Համաշխարհային քաղաքագիտական մտքի խոսույթում, նվիրված գորբալ աշխարհակարգին, վերոնշյալ ժամանակահատվածում, սակայն, անառարկելի առաջնությունը պատկանում է Հենրի Քիսինցերին⁶, ինչպես նաև Ջրիզն Բժեզինսկիին⁷, Սեմյուլ Հանթինզընին⁸, Ֆրենսիս Շուկույամային⁹, Իմանուիլ Վալերյանին¹⁰ և ուրիշների:

Հայ գիտաքաղաքական գրականության մեջ այս ոլորտում հայտնի են առնվազն երեք աշխատանքներ՝ Ռուբեն (Սիրու Տեր-Սիրնասյան)¹¹, Վահան Նավասարդյան¹², Լևոն Շանթ¹³:

Ժամանակակից գիտաքաղաքական գրականությունը, ըստ եռթյան, տալիս է աշխարհակարգի (նոր աշխարհակարգի) ձևակերպման ուրվագիծը՝ այն դիտելով որպես սկզբունքներ, նորմեր և ինստիտուտներ, որոնք կարգավորում են միջազգային դերակատարների (ակտօր) (պետությունների, միջազգային

² Баталов Э.Ю., Мировое развитие и мировой порядок: анализ современных американских концепций. М., 2005, 376 с., «Новый мировой порядок: К методологии анализа.- «Полис» 2003, N 5, с. 25-37.

³ Баталов Э.Ю., Мировой порядок XXI века, 2001, 480 с.

⁴ Утյин А.И., Модели мироустройства. «Безопасность Евразии», 2002, №1, с. 353-362.

⁵ Сирота Н.М., Понятие «Мировой порядок» в современном теоретическом дискурсе, / <http://www.gramota.net/materials/3/2013/3-2/44.html/> 11.09.2015, Сирота Н.М. Глобальный миропорядок: аспекты и тренды становления <http://cyberleninka.ru/article/n/globalnyy-miroporyadok-aktoary-i-trendy-stanovleniya/> 12.12.2015., Сирота Н.М. Новый мировой порядок: тенденции и перспективы становления. Мегатренды глобального социума. Saarbrücken, 2016, 169 с.

⁶ Diplomacy, 1994, 912p., World Order. Reflections on the character of Nations and the Course of History, 2014, 432p.

⁷ Brzezinski Zb. The Grand Chessboard: American Primacy and its Geostrategic Imperatives, 1998, 224p., Strategic Vision: America and the Crisis Global Power, 2012, 208p.

⁸ Huntington S.P. The clash of Civilizations and the Remaking of World Order, 1996, 368p., Who are We? The challenges to American National Identity, 2004, 448 p.

⁹ Fukuyama F. The And of History and the Last Man, 1992, 464 p., State-Building. Governance and World Order in the Twenty-First Century, 2001, 160p.

¹⁰ Wallerstein I. «The and of the world as We Know it,- Social science for the Twenty-first century. 1999, 288 р.

¹¹ Ռուբեն. Հայաստան. միջամարքին ուղիներու վլա, 1948:

¹² Նավասարդյան Վ. Նեղուցները. Վուֆոր և Դարդանել: Թրքական ջրուղիները և Հայ դատարք, 1997:

¹³ Շանթ Լ. Մեր անկախությունը, Պոսթը 1925 (գրված է Սովորել, 1922-1923-ին):

միավորումների, միջազգային կազմակերպությունների, վերազգային կորպորացիաների և այլն) վարքը: Միջազգային հարաբերությունների կառուցվածքը որոշում է քաղաքական գործընթացի կազմակերպման ձևը, ընթացքը և վերարտադրությունը (Ն.Ս. Սիրոտա):

Տարողունակ է Ալ. Կապտոյի լայն ու ընդգրկուն մոտեցումը խնդրո առարկայի աշխարհակառույցի (միրօւստրոյցտե) մոդելներին: Դրանք «միջազգային կյանքի հիմնական գործոնների ամբողջության վրա կառուցված աշխարհի համակարգային տիպարներ, նմուշներ են (օբրազչեր), որոնք ձգտում են հարաբերական հայեցակարգային ինքնուրույնությանը: Աշխարհակառույցի մոդելների հիմնական հատկանիշներն են՝ դիմացկունությունը (ստօրինությունը), կրկնելիությունը, կայունությունը (տաճառությունը), անլանիատությունը, ստուգելիությունը (արիֆիկացիա), այլընտրանքայնությունը, տարբերակայնությունը: Գործող մոդելը հիմնված է (բազարությամբ) օրինականացված պետական սահմանների ուրվագծի, երկկողմ և բազմակողմ հարաբերությունների կառուցվածքի լեզվության, միջազգային ընկերակցության սուբյեկտների փոխգործողության և համագործակցության սկզբունքների, շահերի գոտիների և ազդեցության ուղրուների առկայության, խաղաղության պահպանության կանոնների և բոլորի կողմից ընդունելի անվտանգության գործիքների վրա»¹⁴:

Ուշագրավ է աշխարհակարգի վերաբերյալ քաղաքագիտության մեջ լայնորեն տարածված անզիացի գիտնական Հեղի Բովի տեսակետը՝ հանդիսանություն առ այն, որ համաշխարհային (միջազգային) կարգը միջավետական հարաբերությունների այնպիսի կառուցվածք է, որը սահմանում է «արտաքին ակտիվության բնույթը (վիճակը) կամ ուղղվածությունը, որոնք ապահովում են պետությունների ընկերակցության այն նպատակների անսասանությունը, որոնք նրա համար, մի կողմից, տարրականորեն անհրաժեշտ են, մյուս կողմից, կենսականորեն կարևոր, երրորդ, ընդհանուր են բոլորի համար»¹⁵: Ըստսամին, ըստ Զոն Այրենբերիի «միջազգային հարաբերությունների կենտրոնական խնդիրը կարգի (որպես) հիմնախնդիրն է՝ ինչպես է այն կառուցված, ինչպես է այն քայլայվում և ինչպես է վերականգնվում»¹⁶:

¹⁴ Капто Ал., Энциклопедия мира, 2005, с. 393.

¹⁵ Bull N., The Anarchical Society. A study of Order in World Politics. 3rd ed. Columbia Univ. Press, 2002, p.16.

¹⁶ Ikenberry J., After Victory. Institutions, Strategic Restraint and the Rebuilding of Order after Major Wars Princeton, New Jersey 2001, p. 22.

Ինքնին հասկանալի է, որ աշխարհակարգի բարդությունը, բազմաշերտությունն ու բազմավեկտորությունը պահանջում են նրա բացատրության ու մեկնաբանության տարբեր մոտեցումներ, իմաստավորման այլնտրանքային ուղիներ: Միջազգային (համաշխարհային) գործնքացների դարավոր և տևական ընթացքը տիրականորեն պնդում է և ցույց տալիս նրա առարկայական էվոլյուցիայի շրջանակներում հավասարակշռության՝ նրա խախտման ու անընդհատ վերականգնման փաստի գերակշռող ներկայության վրա (ներկայությանը):

Այս ուղղության բացատրության հիմնական սկզբունքներից մեկը քաղաքական իրապաշտությունն է՝ նրա վերլուծության տիրակալներից մեկը՝ Հենրի Աֆրեդ Քիսինչերը (Հայն Աֆրեդ Կիզինգեր), որը շեշտադրում է աշխարհի առանց հավասարակշռության անհնարինությունը, արդարության անհնարինությունը, առանց ինքնասահմանափակման¹⁷:

Պրոֆեսոր Հենրի Ա. Քիսինչերը (Henry A. Kissinger) գտնում է, որ հաստատվող աշխարհակարգը պետք է ավելի շատ հիշեցնի XIX դարի եվրոպական քաղաքականությունը, եթե ավանդական ազգային շահերը և ուժերի փոփոխվող հարաբերակցությունն էին հատկապես որոշում դիվանագիտական խաղը, դաշինքների կազմակորումն ու քայլայումը, ազդեցության ոլորտների փոփոխությունը: «XXI դարում, - գրում է Քիսինչերը, - միջազգային համակարգը պետք է բնորոշվի թվայցալ հակասությամբ մի կողմից ֆրազմենտացիայի (հատվածականության - Լ.Շ.), մյուս կողմից աճող զրոբալիզացիայի միջև: Պետությունների միջև հարաբերությունների մակարդակում նոր կարգը, որը եկել է փոխարինելու «սառը պատերազմին», պետք է հիշեցնի XVIII-XIX դարերի պետությունների եվրոպական համակարգը»: Իսկ «միջազգային հարաբերություններն առաջին անգամ ձեռք կբերեն իրապես զրոբալ բնույթ»:¹⁸ Հաղթանակը սառը պատերազմում, ասում է Հ. Քիսինչերը, «Ամերիկային տեղափորեց նոր աշխարհում, որը շատ ընդհանրություններ ունի XVIII-XIX դարերի եվրոպական համակարգի հետ...»:¹⁹ Եվ կամ «Միացյալ Նահանգներն ավելի մեծ չափերով հայտնվում են մի

¹⁷Տե՛ս Kissinger H., The White House Years. Boston -Toronto: Little Brown, 1979, էջ 55:

¹⁸Կիսինջեր Հ., Դիվանագիտական համակարգի համակարգի հետ...:

¹⁹Նոյն տեղում, էջ 733:

աշխարհում, որը բազմաթիվ պարամետրերով (բնութագրող մեծություն – Լ.Շ.) ձեռք է բերում նմանություն XIX դարի Եվրոպային, թեկուզ և գլոբալ մասշտարով»:²⁰

Ակնհայտ է, որ Քիսինչերի համար աշխարհի երկրաբարձրական կառուցվածքի հարցը լրացվում է որոշակիորեն: Եվ այս հարցում Քիսինչերն առավել քան հարազատ է իրեն: Այդ աշխարհն, ըստ Էռլյան, հիշեցնում է «Եվրոպական համանվագը»²¹ և հետևապես, բազմաթիւն է:

Քիսինչերը գտնում է, որ Միացյալ Նահանգներն ամենեին եւ այնպիսի փայլուն վիճակում չեն գտնվում, որպեսզի միակողմանիորեն կարողանան թելադրել «զլոբալ միջազգային գործունեությունը», և որ գերտերության ԱՄՆ կարողությունները, այդուհանեւրա, սահմանափակ են: Քիսինչերը ենթադրում է, որ սառը պատերազմից հետո հզորության տարբեր տարբեր ձգտում են «մեծ ներդաշնակության և համաշխափության»: Հստակ արտահայտված արտաքին թշնամու բացակայությունն առաջացնում է ներքին ճնշում, հանուն այլ, ոչ ուազմական ոլորտների առաջնահերթ խնդիրների իրականացման: Նոր իրողությունների պայմաններում, երբ Վտանգն այլևս համապարփակ բնույթ չի կրում, կարծում է Քիսինչերը, յուրաքանչյուր երկիր իր բաղարականությունը կվարի համապատասխան իր սահմանած ազգային շահերի: Իսկ ԱՄՆ-ի դաշնակիցները, չունենալով այլևս ԱՄՆ-ի կողմից պաշտպանության նախկին պահանջները, ստիպված են իրենց անվտանգության պատասխանատվության մի զգալի մասը վերցնել իրենց վրա: «Այսպիսով, -ընդհանրացնում է Հ. Քիսինչերը, - համաշխարհային նոր համակարգի գործառույթը նոյնիսկ ուազմական բնազավառում հանգեցնում է հավասարակշռության, թեկուզն նման վիճակի հասնելու համար դեռևս կպահանջվեն տասնամյակներ: Այդ միտումներն ավելի հստակ դրսուրվում են տնտեսական ոլորտում, որտեղ ամերիկյան գերակշռությունն արդեն անցյալի գիրկն է անցնում: Միացյալ Նահանգներին մարտահրավեր նետելն ավելի ապահով է դարձել»:²²

²⁰ Ըստ տեղում, էջ 761:

²¹ Համանվագի Եվրոպական արմատների պատմական ավանդույթների մասին կարելի է կարդալ. Խերիշո Ֆոսսեյ, Ջոն Կոբբ. Европейские коалиции, союзы и согласия начиная с 1792 года. Пер. с англ. М., 1924, 37с.

²² Կիսսինջեր Ր., Дипломатия, с. 15.

ԽՍՀՄ լուծարումից հետո հետևելով աշխարհի զարգացմանը ընդհանուր միտումներին՝ Քիսինչերը նկատում է, որ հետերկընեղ աշխարհում ճիշտ է, ԱՄՆ-ը հասավ գերակշռության, սակայն նրա ուժերը «ավելի տարակենտրոնացան»: Աշխարհի կերպարը փոխելու ԱՄՆ-ի կարողությունները «իրականում փոքրացան»²³: Ճիշտ է, որ ԱՄՆ-ը մնում է խոշոր ու հզորագույն ազգ, այդուհանդերձ, նրա հետ կա հավասարվող. «հավասարների մեջ առաջինը», սույն մեկը նրանցից²⁴. Իսկ այն աշխարհը, եզրակացնում է Քիսինչերը, որն իր մեջ ներառում է համադրվող հզորության մի շարք երկրներ, իր կազմը պետք է հիմնի հավասարակշռության հայեցակարգերից որևէ մեկի վրա (ընդգծումն իմ է - Լ.Շ.)²⁵: Ընդ որում, համաձայն Հ. Քիսինչերի, միջազգային այն համակարգի մեջ, որն ունի հինգ կամ վեց խոշոր պետություն և բազմաթիվ փոքր պետություններ, կարգը պետք է առաջանա, ինչպես և XIX դարում, «մրցակցող ազգային շահերի հաշտեցման ու հավասարակշռության հիմքի վրա»²⁶ Քիսինչերը գտնում է, որ վերոնշյալ հինգ կամ վեց խոշոր տերություններն են առևազան «Միացյալ Նահանգները, Եվրոպան, Չինաստանը, Ճապոնիան, Ռուսաստանը և, ենարքավոր է Հնդկաստանը (ընդգծումն իմ է - Լ.Շ.), ինչպես նաև մեծարիկ միջին ու փոքր պետություններ»²⁷:

Ուշադրության է արժանի հետազոտության քիսինչերյան մեթոդը: Նա դիմում է պատմության դասերին և անմիջապես զգուշացնում է առ այն, որ պատմության դասերը չի կարելի դիտել որպես գործողության համար ինքնաբերաբար ընդունելի ուղեցույց: «Պատմությունը, - գրում է Քիսինչերը, - սովորեցնում է անալոգիաներով,» լույս սփուրով համադրելի իրադրությունների իրար նման հետևանքների վրա»²⁸: «Պատմությունը - նշում է մի այլ տեղ նույն Քիսինչերը, - սովորեցնում է ըստ անալոգիայի և ոչ թե բացարձակ նմանության օգնությամբ»²⁹:

²³ Նոյն տեղում, էջ 736-737:

²⁴ Նոյն տեղում, էջ 736-737:

²⁵ Նոյն տեղում, էջ 11:

²⁶ Նոյն տեղում, էջ 733:

²⁷ Նոյն տեղում, էջ 15:

* Անալոգիայի եզրակացությունը հավաստի չէ, այլ հավանական, այն տալիս է ճշմարտանման գիտելիք:

²⁸ Նոյն տեղում, էջ 19:

²⁹ Kissinger H.A., World Restored. The Politics of Conservatism in a Revolutionary Age N.Y., 1964. էջ 331. Տե՛ս ՉՍԱ: политическая мысль и история, М., 1976, с. 218.

Պատմության զարգացման տարբեր էտապներում խնդիրների ընդհանրություն անպայմանորեն գոյություն ունի, թեկուզն անհերեթություն է պատմական իրադրությունների բառացի համընկնումների մասին խոսելը: Սակայն, զգուշացնում է Քիսինչերը, յուրաքանչյուր սերունդ ինքը պետք է որոշի իր համար, թե ինչպիսի հանգամանքներն են իրականում համարելի³⁰: Ահա այս մեթոդական հարացուցն ունենալով է, որ նա հանգում է իր հիմնական եզրակացությանը հետսաղըպատերազմյան աշխարհի «եվրոպական համանվագի» հետ անալոգիայի զաղափարին: Քիսինչերն այսուեղ կասկածներ չունի: Խնդրի բարդությունը նրա համար տվյալ եզրակացության մեջ չէ, այլ այնտեղ, թե հավասարակշուության ո՞ր ուղղությունը կընտրվի, համանվագի ո՞ր մոդելը կիրականանա գործնական քաղաքականության արդյունքում, բրիտանականը, որի տակ հասկանում ենք Բենջամին Դիզրայելու^{**} քաղաքականությունը XIX դարում, թե՝ բիսմարկյանը:^{***}

Համաձայն բրիտանական մեթոդի՝ Մեծ Բրիտանիան չի միջամտում [համակարգի գործերին], մինչև չի հայտնվում ուղղակի սպառնալիք ուժերի գոյություն ունեցող հավասարակշուությանը, և դրանից հետո է, որ նա իրեն «կապում» է պարտավորություններով: Ուրեմն, հավասարակշուության հանդեպ ծագած սպառնալիքն է միայն, որ կարող է առաջացնել միջամտություն՝ գրեթե միշտ թույլի կողմից: Անզիհական մեթոդը պահանջում է խստագույն կարգապահություն, վեճերից պարտադիր հեռու մնալ և անողոք ենթարկվածություն հավասարակշուության հակամարտող հայեցակարգերին: Ընդ որում, ինչպես վեճերը, այնպես էլ սպառնալիքները պետք է գնահատվեն գրեթե բացառապես ուժերի հավասարակշուության շրջանակներում: [Կամ որ նույն է՝ «Պալմերստոն - Դիզրայելի մեթոդը պահանջում է կարգապահորեն մի կողմ քաշվել վեճերից և հանդես բերել անողոք նվիրվածություն ուժերի հավասարակշուության պահպանմանը սպառնալիքներին դեմ հանդիման»]⁵³¹: Պատմությունից այս

³⁰ Նոյն տեղում, էջ 19:

** Լրացրացի կարելի է կարդալ. Трухановский В.Г., Бенджамин Диизраэли, или История одной невероятной карьеры. М., 1993.

*** Андреас Х., Петер Б., Выдающиеся политики. Отто фон Бисмарк, Меттерних. Ростов-на - Дону, 1998.

³¹ Киссинджер Г., Дипломатия, с. 762.

հայեցակարգը հայտնի է որպես «Splendid Isolation»* «հրաշալի մեկուսացում»:

Ի տարբերություն «անարգ Բիկոնսֆիլդ» (Մ. Վարաննյան) «Splendid Isolation»-ի Բիսմարկի մեթոդը հանգում է նոր մարտահրավերների առաջացման կանխմանը հնարավոր շատ թվով կողմերի հետ հարաբերությունների հաստատման միջոցով: Այն ձեռք է բերվում իրար վրա դրվող միությունների համակարգով և դրա հետևանքով «ստեղծված» ազդեցության օգտագործման ճանապարհով՝ հակառակորդի հավակնությունների զայման համար: [Կամ «Բիսմարկի մոտեցումը, - գրում է Քիսինչերը, - հանգում էր մարտահրավերների որպես այդախսինների երևան զարու կանխման եղանակների որոնումներին. եղանակներ, որոնք ձեռք էին բերվում իրար վրա բարդվող դաշինքների համակարգերի օգնությամբ և դրա հետևանքով առաջացող ազդեցության օգնությամբ հնարավորինս առավելագույն թվով կողմերի հետ մոտ հարաբերություններ հաստատելու միջոցով, մրցակիցների հավակնությունները զայելու համար»]³²:

Ուշ Բիսմարկի քաղաքականությունը նպատակառությած էր երկրների այս կամ այն խմբի հետ նպատակների ընդհանրականության հարցում լուրատեսակ կռնանատուած միջոցով կանխարգելող զայռումների

³² Киссинджер Г., Дипломатия, с. 762.

որոնմանը³³ [Կամ «Բիսմարկի ավելի ուշ շրջանի քաղաքականությունը ուղղված էր պետությունների առանձին խմբակցությունների առջև ծառացած նպատակների ընդհանրականության հարցում կոնսենսուսի միջոցով ուժերի կանխիչ սահմանափակմանը»]³⁴:

Քիսինչերի անձնական համակրանքը Եվրոպայի խոշորագույն քաղաքական և պետական գործիչներից Կոմս Կլեմենս Սետերնիխի և վրոպական պետությունների հավասարակշռության վերականգնման հետնապոլեոնյան քաղաքականության («համարելի համզամանքների») կողմն է: «Կարելի է միայն հուսայ,- ասում է Քիսինչերը, - որ կիայտնվի ինչ-որ մի բան նման Սետերնիխի համակարգին, որտեղ ուժերը հավասարակշռվում էին արժեքների ընդհանրությամբ», ու որոնք մեր դարաշրջանում «պարտավոր են լինել ժողովրդավարական»³⁵: Ավելին, Քիսինչերը դեմ չէր լինի, եթե տարբեր խմբավորումները միավորող (ամրացնող) նպատակներն ու խնդիրները բխեին «ամերիկյան արժեքներից»³⁶: Իսկ բանի որ մետերնիխյան համակարգը (որը հիմնված է լեզվահմության վրա) հնարավոր չէ, «ԱՄՆ-ը հարկադրված է սովորել գործել ուժերի հավասարակշռության համակարգի շրջանակներում»³⁷:

Ինչքան էլ տարօրինակ է, Քիսինչերը՝ Realpolitik-ի այդ տեսաբանն ու ցերմ երկրագուն, չի մոռանում Վուլյո Վիլսոնի մեծարումն ու զուգահեռաբար նրա թողած ահոելի բարոյա-քաղաքական ժառանգության ազդեցության «հաղթահարումը», որ ունի նա ցայսօր ամերիկյան քաղաքական մտածողության վրա՝ առհասարակ, արտաքին աշխարհ ուղղված նախաձեռնություններում՝ մասնավորապես: Ժամանակին, ասում է Քիսինչերը, ԱՄՆ նախազահ Վիլսոնը Եվրոպացիներին ազդարաբեց, որ այսուհետև համշխարհային համակարգը կառուցվելու է ոչ թե ուժերի հավասարակշռության հայեցակարգով, այլ մեկնելով էրնիկական ինքնորոշման սկզբունքից: [Այս սկզբունքի հիման վրա էլ նախատեսվում էր ստեղծել «Վիլսոնյան Հայաստանը»՝ Սերի 1920 թվականի օգոստոսի 10-ի դաշնագրով]: Ըստ Վիլսոնի՝ երկրների անվտանգությունը պետք է կախված լիներ ոչ թե ուազմական

³³ Նոյն տեղում, էջ 773:

³⁴ Նոյն տեղում, էջ 762:

³⁵ Նոյն տեղում, էջ 761:

³⁶ Նոյն տեղում, էջ 773-774:

³⁷ Նոյն տեղում, էջ 773:

դաշինքներից, այլ կոլեկտիվ գործողություններից³⁸: Վիլսոնյան այս համակարգը, որը նորից հիմնված է լեզիտիմության սկզբունքի վրա, եթե հնարավոր չէ (և իրոք, այժմ և տեսանելի ապագայում այն հնարավոր էլ չէ. – Լ.Շ.), նշանակում է, ըստ Քիսինջերի, «Ամերիկան պարտավոր է որոնել իր տեղն աշխարհում: Եվ այդ տեղը, ինչպես և ենթադրվում է, ուժերի հավասարակշռության համակարգի շրջանակներն են»:

Թվում է Քիսինջերի ընտրությունը պետք է ԱՄՆ-ի համար նախատեսեր մետերնիխյան տարբերակը: Սակայն քաղաքական իրապաշտության այս նահապետը չի փորձում իր համակրանքը ներկայացնել որպես հնարավոր ընդունելին ԱՄՆ-ի համար: Նա գունում է, որ ԱՄՆ-ի համար չափազանց դժվար կլինի, գրեթե անհնար, եւստեղ անզիշական «Splendid Isolation»-ին, այն անողորությանը, որը հատուկ է այդ սկզբունքին: Միաժամանակ, թիշ է հավանական, որ ԱՄՆ-ը կարողանա ստեղծել անվտանգության համընդգրկուն համակարգ հավասարապես կիրառելի աշխարհի բոլոր մասերում: Կամ կարողանա միջազգային հարաբերությունները մեկնաբանել բացառապես ուժերի հավասարակշռության տեսանկյունով:

Արգասավոր կլիներ, գտնում է Քիսինջերը, եթե ստեղծվեին մասնակիորեն խաչաձևող դաշինքներ, մի մասը՝ ուղղորդված դեպի անվտանգության հիմնախնդիրներ, մյուսները՝ տնտեսական հարաբերություններ: Իսկ լավագույն լուծում կլիներ, համաձայն Քիսինջերի, «իրար վրա բարդվող կառուցվածքների ստեղծումը՝ մասամբ օգտագործելով քաղաքական ու տնտեսական սկզբունքների ընդհանրությունը, ինչպես դա արվում է Արևմտյան կիսագնդում՝ մասամբ զուգակցելով սկզբունքների ընդհանրականությունը և անվտանգության նկատառությունները, ինչպես Ասուանտիկայի շրջանում և Արևելյան Ասիայում. մեացած ամբողջը կլիներ տնտեսական բնույթի կապերի վրա»³⁹:

Թեկուզն, ասում է Քիսինջերը, ուժերի հավասարակշռության ոճը ավելի է համապատասխանում միջազգային հարաբերություններում ամերիկյան մոտեցմանը, այդուհանդերձ, նա հազում է գալիքի

³⁸ Киссинджер Г., Дипломатия, с. 11.

«Այդ մասին տես՝ Kissinger H., World Order: Reflections on the Character of Nations and the Course of History. Allen Lane, 2014, 432 p.

³⁹ Киссинджер Г., Дипломатия, с. 762.

ուրվագծերը որոնելիս սկզբունքային նշանակության ընդհանրացման: «Ֆիզիկական սպառնալիքի և թշնամական զաղափարախոսության իրական լինելը, որը բնորոշ էր «սառը պատերազմների» ժամանակներին, չքացել է: Համոզվածությունը, որպես ծնվող աշխարհակարզը կառավարելու պահանջ, ավելի վերացական բնույթ է կրում. պատկերացումն աշխարհի մասին, որը չունի ակնառու կերպար նրա ձևավորման պահին և հույսի ու հնարավորության փոխարաբերության վերաբերյալ դատողությունը՝ իր էությամբ ենթադրական է: Անցյալի Ամերիկայի վիլսոնյան նպատակները խաղաղություն, կայունություն, առաջադիմություն ու ազատություն համայն մարդկության համար, պետք է ձեռք բերվեն ճանապարհի ընթացքում, որին վերջ չկա»⁴⁰:

Հայտնի է, որ Բիսմարկի քաղաքականության ալֆան և օմեգան խուսափելու էր Եվրոպայի առաջատար տերության վերածվող Գերմանիայի մեկուսացումից: Դրա համար նա ձգուում էր Գերմանիայի շահերը պաշտպանել ոչ թե համակարգի դրսից (Դիզրայելիի ու Գլազուտոնի Անգլիայի նման), այլ լինելով համակարգի կենտրոնամ: Այս սկզբունքային դիրքորոշման հիմնական կանոնը Բիսմարկը ձևակերպել է Ռուսաստանի դեսպան Սաքուրովի հետ գրույցի ընթացքում (հունվար, 1880թ.). ամբողջ քաղաքականությունը կարող է հանգել հետևյալ բանաձևին. «Ճգուիր լինել երեքով այն աշխարհում, որտեղ կառավարում է հինգ խոշոր տերությունների դուրսաբեկ հավասարակշռությունը: Դա միակ իսկական պաշտպանությունն է թշնամական դաշինքների ձևավորման դեմ»⁴¹: [Թերեւս քաղաքականության բիսմարկյան ըմբռնման պատկերն ավելի ամբողջական կլինի, եթե հիշենք մի այլ ձևակերպում. «Խոշոր պետության քաղաքականության միակ առողջ հիմնավորումը... եսասիրությունն (էգոիզմն) է, այլ ոչ թե ոռմանտիզմը... Քաղաքականությունը հնարավորի արվեստն է, հարաբերականի գիտությունը»]⁴²:

Քիսինջերն իր «Ունի⁴³» Ամերիկան արտաքին քաղաքականություն: 21-րդ դարի դիվանագիտության ուղու վրա (2001)» աշխատության մեջ անդրադարձել է համաշխարհային քաղաքականության հիմնարար

⁴⁰ Նույն տեղում, էջ 763:

⁴¹ Ст'яу Чубинский В.В., Бисмарк: политическая биография, М., 1988, с. 331.

⁴² Հասլ Kissinger H.A., The White Revolutionary: Reflections on Bismarck. – «Deadalus», Summer 1968, p. 906-907.

խնդիրներին և աշխարհի երկրաբարձրական կառուցվածքի իր պատկերացումներին: Նա կասկածի տակ է դնում հենց միջազգային հարաբերությունների համակարգի գոյության հնարավորությունը և գտնում է, որ այդպիսի համակարգը, որը սահմաներ միավ, բոլորի համար ընդհանուր բանաձև, աշխարհում գոյություն չունի: Համագործակցում են առնվազն չորս համակարգեր: 1) Հյուսիսային Ատլանտիկայում գերիշխում է ժողովրդավարությունն ու ազատ շուկան. պատերազմն այստեղ գրեթե գործնականում հնարավոր չէ: 2) Ասիայում, ԱՄՆ-ը, ՉԺՀ-ն և մի շարք տարածաշրջանային տերություններ միմյանց նայում են որպես ռազմավարական մրցակիցներ. այստեղ պատերազմը սկզբունքորեն հնարավոր է և այն զապում է ուժերի առաջացած հավասարակշուրջությունը (XIX դարի Եվրոպականի տիպով): 3) Մերձավոր Արևելքում պետությունները փոխգործում են, ինչպես այն կար Եվրոպայում XVII դարում. այստեղ գործում են հակամարտությունների տարբեր աղյուրներ, որոնց թվում և զաղափարախոսական ու կրոնական դժվար լուծելի հակամարտություններ: 4) Աֆրիկայում գերիշխում են Եթովիկական հակամարտությունները, որոնք ծանրաբենված են սահմանների համար վեճերից ու սարսափելի աղքատությունից ու համաճարակներից: ԱՄՆ-ը այդ չորս համակարգերից յուրաքանչյուրում գործում է տարբեր կերպ և նրանց իմաստիալիզմը յուրաքանչյուր դեպքում ունի տարբեր բնութագրեր⁴³: Անկասկած, Քիսինչերի տեսակետից, բարերար:

Քիսինչերը զարգացնում է այն միտքը, որ աշխարհը, նրա կայունությունն ու բարգավաճումը, առաջնորդի կարիք է ծնում, և բարեբախտաբար, առաջնորդը՝ ԱՄՆ-ը, գիտակցել է իր պատմական խնդիրը: Քիսինչերը կոչ է անում հիշել փոխընտրանքների տիտուր Վախճանը, ուժերի կայուն հավասարակշուրջյան հիմքի վրա կարգավորված զարգացման փորձը: Ուժերի հավասարակշուրջյան համակարգը ծնում է մրցակցություն և սպառնում անկանխատեսելի հետևանքներով, բախումներով: Քիսինչերը ցուց է տալիս, որ «ուժերի հավասարակշուրջյան համակարգը գոյություն է ունեցել մարդկության պատմության մեջ շատ հազվագյուտ: Այդպիսի համակարգ երբեք չի եղել Արևմտյան կիսազնդում, հավասարապես նաև ժամանակակից Շինաստանի տարածքում արդեն երկու հազար տարի: Մարդկության ահույի մեծամասնության համար և պատմության ամենատևական

⁴³ Հայտ՝ Kissinger H.A., Does America Need a Foreign Policy? N. Y., 2002, p. 102-104.

շրջաններում կայսրություններն են եղել կառավարման ամենատիպական ձևերը։ Կայսրությունները կարիք չունեն պահպանելու ուժերի հավասարակշռությունը։ Նրանք կարիք չունեն միջազգային հարաբերությունների համակարգի։ Հենց այդպես են Միացյալ Նահանգները իրավանացրել իրենց քաղաքականությունը Արևմտյան կիսազնությունը, իսկ Չինաստանը՝ Սահայի ողջ պատմության ընթացքում։⁴⁴

Նկատենք, որ Հ. Քիսինչերի այս շարքի վերջին գործը «World order» (2014), ըստ եռթյան, հանրագումարի բերելով տեսական պրատումների ու գործնական քաղաքականության տասնամյակների հանրազիտարանային ընդհանուրացումը և այդ տեսանկյունից լինելով անկրկնելի, սկզբունքորեն նոր բան չի ավելացնում մինչև օրս իր կողմից ասվածին։ Թերևս հռչակավոր «Դիվանագիտություն»-ից հետո նման խնդիր դնելն ու լուծելը իմաստ էլ չուներ։

ՀԳ: Քիսինչերի պարադոքսը։ Հենրի Ալֆրեդ Քիսինչերը՝ համաշխարհային քաղաքականության նահապետը ու գիտարարաքական հետազոտությունների անառարկելի հեղինակությունը, իր գործունեության երկար ու ձիգ տասնամյակների ընթացքում ըստ արժանվույն գնահատելով հավասարակշռության երկարյա օրենքն ու գործառույթները աշխարհի առանցքային ռազմավարական տարածաշրջաններում՝ Եվրոպա, Եվրասիա, Հյուսիսային Ամերիկա, Չինաստան և այլն, նրանցից առնվազն երկուսի համար՝ Հյուսիսային Ամերիկա և Չինաստան, բացառություն է արել դրանք դուրս համարելով տվյալ օրենքի ընդգրկման շրջանակներից։ Տվյալ օրենքի գործառույթը վերապահումներով է ընդունում նաև պատմական տարբեր դարաշրջանների համար դրանով իսկ այն դուրս է դրել ունիվերսալ օրենքների շարքից։ Թեև, եթե լոկալ և ժամանակային առումով դա արդարացված է, սակայն զորքալ իմաստով խիստ կասկածելի է։

Եվ պարադոքսն այն է, որ ԽՍՀՄ-ի հետ ԱՄՆ-ի մրցակցության մեջ ԱՄՆ հաղթեց նույն հավասարակշռության օրենքի կիրառմաբ շնորհիվ «եռակողմ դիվանագիտության» (triangular diplomacy), Նիքոլ Քիսինչեր տանդեմի կողմից Չինաստանի հետ «հանկարծակի»

⁴⁴ Киссинджер Г., Дипломатия, с. 13.

* Այս աշխատանքի մասին տե՛ս Արզумանյան Պ., Киссинджер и мировой порядок 21 века. - «Аналитикон», 2014, ноябрь; Соколов И.А., Международный порядок или беспорядок: взгляд Г. Киссинджера на новый мир XX века. - «Вестник Волгоградского университета. Серия 4», 2014, № 6:

մերձեցման (Նիքոլայի այցը Զինաստան կայացավ 1972 թվականի փետրվարի 21-28) և ԽՍՀՄ-ի մեկուսացման միջոցով ԽՍՀՄ զառամող դեկապարության ապշահար աշխարհայացքի ներքո: Այս մասին Քիսինչերը ոչինչ չի ասում:

Այսպես սկսվեց ԽՍՀՄ լճացման և անկասելի անկման ժամանակաշրջանը:

ԱՍՓՈՓՈՒՄ

Հողվածում վերլուծվում է ժամանակակից դարաշրջանում աշխարհակարգի՝ որպես քաղաքական գիտության ամենաքիչ ուսումնասիրված խնդրի հասկացության և օրինաչափությունների գարգացումը:

Այս համատեքստում դիտարկվում է աշխարհակարգի վերաբերյալ ժամանակակից հետազոտողներից մեկի՝ Հենրի Ալֆրեդ Քիսինչերի հայացքները: Մասնավորապես ուսումնասիրվում է նրա առնչությունը հավասարակշության հայեցակարգի և նրա անհետնողականությունը այդ հարցի կապակցությամբ:

Բանալի բառեր. աշխարհակարգ, հակամարտություններ, հավասարակշություն, Ալֆրեդ Քիսինչեր, Ռիչարդ Նիքոլայ:

КИССИНДЖЕРОВСКОЕ ВИДЕНИЕ МИРОПОРЯДКА

Левон Ширинян

Доктор политических наук, профессор,
ведущий научный сотрудник Института философии,
социологии и права, НАН РА

РЕЗЮМЕ

В статье анализируются понятие миропорядка и закономерности его развития в современную эпоху, как одна из малоизученных проблем политической науки.

В этом контексте рассматривается эволюция взглядов на миропорядок одного из современных исследователей - Генри Альфреда Киссинджера. В частности, изучается его отношение к концепции баланса, и его специфическая непоследовательность по этому поводу.

Ключевые слова: мировой порядок, конфликты, баланс, Альфред Киссинджер, Ричард Никсон.

KISSINGER'S VISION OF WORLD ORDER

Levon Shirinyan

*Doctor of Political Science, Professor,
Leading Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

The article analyzes the conception of world order and the peculiarities of its development in the modern era as one of poorly studied problems of political science.

In this context, the article explores the evolution of views on the world order of Henry Alfred Kissinger as one of modern researchers. In particular, the article discusses his approach to the concept of balance and his specific incoherence on this issue.

Key words: world order, conflicts, balance, Alfred Kissinger, Richard Nixon.

ПОЛИТИЧЕСКАЯ СИМВОЛИКА ТРЕТЬЕЙ РЕСПУБЛИКИ: ВСЕ ЕЩЕ В ПОИСКАХ ИДЕНТИЧНОСТИ¹

Сурен Золян

*Доктор филологических наук, профессор,
ведущий научный сотрудник Института философии,
социологии и права, НАН РА*

В настоящей статье мы рассмотрим некоторые аспекты того, какое символическое оформление получили процессы формирования независимой армянской государственности в начале 90-х годов. Говоря о них, как правило, основное внимание уделяется собственно политическим и экономическим аспектам: борьбе за демократию против тоталитаризма, национально-освободительной борьбе против Кремля, изменение экономического строя и т.п. Между тем, уже само понятие национального государства как явление Нового времени есть прежде всего идея государственности, основанной на национальной идеологии и культуре.

¹ Исследование выполнено при поддержке Государственного комитета по науке МОН РА в рамках армяно-российского совместного научного проекта № 15РГ-24 «Семиотика политического дискурса: трансдисциплинарный подход».